ԴԱՍԸՆԹԱՑ 6

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Քննության հարցեր

Դեկտեմբեր 2021թ

Հարց 1.

ա/ Դուք հանդիսանում եք «Կարմիր գլխարկ» ՓԲԸ (Կազմակերպություն) քաղցրավենիքի խանութների ցանցի նոր հաշվապահը և առաջին հաշվետու եռամսյակի շրջանառության տեղեկագրի (փորձնական հաշվեկշռի) նախնական տարբերակը՝ 2020թ. հունիսի 30-ի դրությամբ, ներկայացվել է Ձեզ և ունի հետևյալ տեսքը.

Շրջանառության տեղեկագիր (փորձնական հաշվեկշիռ) 2020թ. հունիսի 30-ի դրությամբ	*Դտ*	*Կտ*
	Հազար ՀՀ դրամ	*Հազար ՀՀ դրամ*
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ՝ կապված վարձակալված խանութների հետ	35,200	
Տնտեսական գույք	10,000	
Պաշարների սկզբնական մնացորդ՝ միայն քաղցրավենիք	2,600	
Բաժնետիրական կապիտալ		28,000
Տրանսպորտային ծախսումներ՝ քաղցրավենիքի ներմուծման և պահեստ տեղափոխման համար	2,200	
Դեբիտորական պարտքեր	4,500	
Կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստ		320
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	290	
Կրեդիտորական պարտքեր		5,000
Վաճառքից հասույթ		117,000
Տարվա ձեռքբերված ապրանքներ (քաղցրավենիք)՝ ձեռքբերման գնով	76,700	
Կարճաժամկետ վարձակալության գծով ծախս	3,400	
Մեքենաներ և սարքավորումներ	4,800	
Այլ վարչական ծախսեր	13,900	
Բոլոր հիմնական միջոցների կուտակված մաշվածություն		3,000
Այլ եկամուտ		270
Ընդամենը	**153,590**	**153,590**

Ի լրումն, առկա է հետևյալ տեղեկատվությունը՝

- Կազմակերպությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ունի վարձակալության համար կատարված կանխավճար, որոնք ներառված են կարճաժամկետ վարձակալության գծով ծախսերում՝ 200 հազար դրամ:
- Կազմակերպության քաղցրավենիքի վերջնական մնացորդը՝ համաձայն գույքագրման տվյալների՝ 2020թ. հունիսի 30-ի դրությամբ կազմում է 1,900 հազար դրամ:
- Նոր փաստեր ի հայտ գալու հետ կապված՝ Կազմակերպության ղեկավարության գնահատմամբ, կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստը՝ 2020թ. հունիսի 30-ի դրությամբ, պետք է կազմի 200 հազար դրամ:
- Ձեզ զարմացնում է այն փաստը, որ Կազմակերպության փորձնական հաշվեկշռում առկա չեն քաղցրավենիքի մնացորդից բացի այլ պաշարներ (հիմնականում գրասենյակային պարագաներ) և Կազմակերպության ղեկավարությունը Ձեզ տեղեկացնում է, որ նախորդ հաշվապահը դրանք ներառում է «Տնտեսական գույք» տողում: Համաձայն Ձեր գնահատումների՝ «Տնտեսական գույք» տողում ներառված պաշարներն ունեն հետևյալ մնացորդները, որոնք ներառված չեն փորձնական հաշվեկշռի Պաշարների մնացորդներում՝
    - Սկզբնական մնացորդ՝ 1,100 հազար դրամ
    - Վերջնական մնացորդ՝ 1,400 հազար դրամ
- Կազմակերպության «Մեքենաներ և սարքավորումներ» դասում առկա բոլոր մեքենաները վերագնահատվել են, սակայն նախորդ հաշվապահի կարծիքով դրանք չպետք է արտացոլվեն ֆինանսական հաշվետվություններում, քանի որ վերագնահատման արդյունքում առաջացող տարբերություններն էական չեն: Տեղեկանում ենք, որ Կազմակերպության ՖՀՄՍ-ների համաձայն պատրաստված հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն «Մեքենաներ և սարքավորումներ» դասի նկատմամբ կիրառվում է վերագնահատման քաղաքականությունը: Համաձայն անկախ գնահատողի հաշվետվության՝ հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ Կազմակերպության «Մեքենաներ և սարքավորումներ» դասի վերագնահատված արժեքը կազմում է 5,500 հազար դրամ:
- Կազմակերպության նախորդ տարվա (2019թ.-ի տարեկան) շահութահարկի գծով ծախսը կազմել է 8,400 հազար դրամ: Կազմակերպության գործունեությունը չունի արտահայտված սեզոնայնություն և ծախսերն ու եկամուտները մոտավորապես հավասարապես են բաշխվում ամբողջ տարվա ընթացքում: Տեղեկանում եք նաև, որ Կազմակերպությունը շահութահարկի գծով չունի որևէ կատարված կանխավճար:
- Կազմակերպության ֆինանսական տարին ավարտվում է մարտի 31-ին:

Պահանջվում է՝

1. Պատրաստել Կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2020թ. հունիսի 30-ի դրությամբ (հաշվարկների նպատակով չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը դիտարկել որպես հավասար զրոյի): ***(10 միավոր)***

2. Պատրաստել Կազմակերպության շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը՝ 2020թ. հունիսի 30-ին ավարտվող եռամսյակի համար:
   (10 միավոր)
3. Պատրաստել անհրաժեշտ ծանոթագրությունները, որոնք պետք է կցվեն Կազմակերպության վերը թվարկված ֆինանսական հաշվետվություններին: Հիմնական միջոցների ծանոթագրությունը հարկավոր չէ ներկայացնել ըստ դասերի: ***(5 միավոր)***

Հարց 2

Դուք հանդիսանում եք «Մաքուր պուրակ» ՍՊԸ (Կազմակերպություն) հաշվապահը: Կազմակերպությունը զբաղվում է հանքային ջրերի արտադրությամբ: Կազմակերպության հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է: Ձեր տրամադրության տակ առկա է 2019թ.-ի դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները, ինչպես նաև 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, որոնք ներկայացված են ստորև:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*
	Մլն. դրամ	*Մլն. դրամ*
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ, հաշվեկշռային արժեք*	858	630
	858	**630**
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	98	105
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	102	86
Այլ դեբիտորական պարտքեր՝ ստացվելիք դիվիդենտների գծով	57	50
Կանխիկ և բանկային մնացորդներ	42	18
	299	**259**
Ընդամենը ակտիվներ	**1,157**	**889**
Սեփական կապիտալ և պարտավորություններ		
Կանոնադրական կապիտալ	200	120
Էմիսիոն եկամուտ**	106	80
Վերագնահատման պահուստ	212	12
Չբաշխված շահույթ	283	226
	801	**438**
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Վարկեր	200	300
Ընթացիկ պարտավորություններ		
Կրեդիտորական պարտքեր և ստացված կանխավճարներ	77	79
Տոկոսների գծով պարտավորություններ	3	5
Շահութահարկի գծով պարտավորություն	76	67
	156	**151**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**1,157**	**889**

* Կուտակված մաշվածությունը կազմում է 190 մլն դրամ՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 120 մլն դրամ՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

** Հանդիսանում է բաժնետոմսերի շուկայական ու անվանական արժեքների տարբերությունը:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Մլն. դրամ
Վաճառքից հասույթ	1,100
Վաճառքի ինքնարժեք	(678)
Համախառն շահույթ	**422**
Գործառնական ծախսեր	(309)
Գործունեությունից շահույթ	**113**
Ներդրումներից եկամուտ՝	
Տոկոսներից	15
Դիվիդենտներից	57
Ֆինանսական ծախսեր	(20)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից վնաս	(2)
Շահույթ՝ մինչև հարկերը	**163**
Շահութահարկի գծով ծախս	(71)
Զուտ շահույթ	**92**

Համաձայն հաշվապահական հաշվառման գրանցումների՝

- Կանոնադրական կապիտալի աճը տեղի է ունեցել հիմնականում դրամական միջոցների ներդրման հաշվին՝ 70մլն դրամ, մնացածը՝ ներդրված հիմնական միջոցների հաշվին:
- Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից վնասը վերաբերում է դրամական միջոցների մնացորդին:
- Գործառնական ծախսերում ներառված է հիմնական միջոցների օտարումից վնասը՝ 5 մլն դրամ, ընդ որում օտարման դիմաց վճարումն ամբողջությամբ ստացվել է գնորդից:
- Օտարված հիմնական միջոցի սկզբնական արժեքը կազմում էր 80մլն դրամ, իսկ օտարման ամսաթվի դրությամբ կուտակված մաշվածությունը՝ 15 մլն դրամ:
- Դեբիտորական պարտքերում առկա չեն տոկոսների գծով ստացվելիք գումարներ:
- Տարվա ընթացքում հայտարարվել և ամբողջությամբ վճարվել է դիվիդենտ:

Պահանջվում է՝

1. Պատրաստել դրամական հոսքերի մասին հաշվետվությունը: Գործառնական գործունեությունից դրամական հոսքերը ներկայացնել <u>անուղղակի</u> մեթոդով: Ներկայացնել նաև հիմնական միջոցներին կից ծանոթագրությունը (հաշվեկշռային արժեքի համադրումը) ***(20 միավոր)***
2. Պատրաստել սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար: ***(5 միավոր)***

Հարց 3

«Մարինադ» ՓԲԸ-ն (Կազմակերպություն) զբաղվում է մարինացված մրգերի ու բանջարեղենների արտադրությամբ: Համաձայն Կազմակերպության ղեկավարության գնահատման՝ Կազմակերպությունը պետք է ավելացնի մարինացված դդմի արտադրությունը՝ դրա պահանջարկի աճով պայմանավորված: 2020թ. հունվարի 1-ին Կազմակերպությունը ձեռք է բերում «Դդմիկ» ՓԲԸ-ի զուտ ակտիվների 75 տոկոսը: Դուք հանդիսանում եք Կազմակերպության հաշվապահը և առաջին անգամ պետք է համախմբեք այս երկու ընկերությունների առանձին ֆինանսական հաշվետվությունները:

Ստորև երկու ընկերությունների առանձին ֆինանսական հաշվետվություններն են՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և ամսաթվին ավարտված տարվա համար:

	«Մարինադ» ՓԲԸ	*«Դդմիկ» ՓԲԸ*
	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*
	Մլն. դրամ	*Մլն. դրամ*
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	81,744	11,875
Ներդրում "Դդմիկ" ՓԲԸ-ում	63,285	-
	145,029	**11,875**
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	29,801	31,008
Դեբիտորական պարտքեր	32,875	20,783
Կանխիկ և բանկային մնացորդներ	39,636	28,540
	102,312	**80,331**
Ընդամենը ակտիվներ	**247,341**	**92,206**
Սեփական կապիտալ և պարտավորություններ		
Բաժնետիրական կապիտալ	65,000	20,000
Էմիսիոն եկամուտ*	34,400	11,500
Չբաշխված շահույթ	77,145	21,856
	176,545	**53,356**
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Վարկեր	18,736	-
Ընթացիկ պարտավորություններ		
Կրեդիտորական պարտքեր	37,275	27,785
Շահութահարկի գծով պարտավորություն	14,785	11,065
	52,060	**38,850**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**247,341**	**92,206**

* Առաջացել է բաժնետոմսերի իրական ու անվանական արժեքների տարբերության արդյունքում:

Առկա է նաև հետևյալ տեղեկատվությունը:

- «Մարինադ» ՓԲԸ-ի ներդրման գումարը՝ «Դդմիկ» ՓԲԸ-ում, համարժեք է փոխհատուցման իրական արժեքին:
- «Մարինադ» ՓԲԸ-ն ձեռք է բերել «Դդմիկ» ՓԲԸ-ի զուտ ակտիվների 75 տոկոսը՝ 01.01.20թ.-ին, և այդ ամսաթվի դրությամբ «Դդմիկ» ՓԲԸ-ի չբաշխված շահույթը կազմել է 14,618 մլն դրամ, իսկ չվերահսկվող բաժնեմասի (25 տոկոս) իրական արժեքը կազմում է 10,799 մլն դրամ:
- 31.12.20թ. դրությամբ՝ համաձայն այս երկու ընկերությունների միջև կնքված փոխադարձ պարտավորությունների մասին ակտի՝ «Դդմիկ» ՓԲԸ-ի պարտավորությունը "Մարինադ" ՓԲԸ-ի հանդեպ կազմում է 7,614 մլն դրամ:

Պահանջվում է պատրաստել 31.12.20թ. դրությամբ Խմբի համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ներառյալ համապատասխան ծանոթագրությունները (հաշվարկները): ***(25 միավոր)***

Հարց 4

«Առողջ տեսք» ՍՊԸ (Կազմակերպություն) զբաղվում է օճառների (2 տեսակի օճառ՝ հոտավետ և առանց հոտի) ու շամպունների (2 տեսակի շամպուն՝ լողանալու և մազերի) արտադրությամբ: Կազմակերպությունն իր ապարանքները վաճառում է հատուկ դիլերների միջոցով, որոնք սպասարկում են ամբողջ հանրապետությունը: Կազմակերպության ֆինանսական տարին ավարտվում է դեկտեմբերի 31-ին: 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Դուք տեղեկանում եք հետևյալի մասին.

- Դիլերներից մեկը տեղեկացրել է Կազմակերպությանը, որ օճառի օգտագործումը որոշ հաճախորդների մոտ առաջացրել է ալերգիկ ռեակցիա և համաձայն որոշ տեղեկատվության՝ շատ են հաճախորդները, ովքեր պատրաստվում են դիմել դատական մարմիններին՝ փոխհատուցում ստանալու ակնկալիքով: Համաձայն Կազմակերպության մասնագետների վերլուծության՝ դա կարող է կապված լինել 2020թ. դեկտեմբերից 15-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 21-ն արտադրված օճառների հետ, քանի որ մի որոշ ժամանակ, Կազմակերպության հիմնական մատակարարը չէր կարողացել մատակարարել արտադրության անհրաժեշտ հումքը, հետևաբար Կազմակերպությունը ստիպված էր գնումներ կատարել անծանոթ մատակարարներից: Համաձայն Կազմակերպության իրավաբանի՝ բոլոր հաճախորդների դիմելու պարագայում դատական հայցն ամենայն հավանականությամբ (մոտ 95 տոկոս հավանականությամբ) կբավարարվի ի հօգուտ հաճախորդների և փոխհատուցման գումարը կկազմի 14 մլն դրամ:

- 2021թ. հունվար ամսվա վաճառքները ցույց են տալիս, որ բավականին նվազել են վաճառքների ցուցանիշները: Դրանք մասամբ սեզոնային բնույթ են կրում, սակայն համաձայն Ձեր դիտարկումների՝ դրանք էականորեն կարող են նաև կախված լինել վերը նկարագրված խնդրի հետ: Ձեր խնդրանքով՝ պաշարների հաշվառմամբ զբաղվող հաշվապահը Ձեզ է ներկայացնում արտադրանք միավորի արժեքն ու դրանց վաճառքի գինը, ինչը նկարագրված է ստորև բերված աղյուսակում՝

Արտադրանք	*2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ինքնարժեք՝ դրամ*	*2021թ. հունվարին վաճառքի միջին գին՝ դրամ*
Օճառ՝ հոտավետ	140	115
Օճառ՝ առանց հոտ	160	137
Շամպուն՝ լողանալու	265	310
Շամպուն՝ մազերի	340	330

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ պատրաստի արտադրանքի վերաբերյալ առկա է հետևյալ տեղեկատվությունը՝

Արտադրանք	*2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*	
	Քանակ՝ հատ	*Մնացորդ՝ հազար դրամ*
Օճառ՝ հոտավետ	78,340	10,968
Օճառ՝ առանց հոտ	14,380	2,301
Շամպուն՝ լողանալու	21,785	5,773
Շամպուն՝ մազերի	10,600	3,604
		22,646

Պահանջվում է՝

1. Նկարագրել «*Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ»* ՀՀՄՍ 37-ի պահանջները՝ կապված պահուստների սահմանման, ճանաչման և չափման հետ: ***(5 միավոր)***

2. Նկարագրել քայլերը, որոնք կձեռնարկեք՝ կապված հնարավոր դատական հայցերի հետ: ***(5 միավոր)***

3. Նկարագրել «*Պաշարներ»* ՀՀՄՍ 2-ի պահանջները՝ կապված պաշարների արժեքի վազման հետ: ***(5 միավոր)***

4. Նկարագրել պաշարների նկատմամբ ճշգրտումները, որոնք պետք է կատարվեն Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում՝ կապված պատրաստի արտադրանքի վաճառքների գների նվազեցման հետ: ***(10 միավոր)***